

Կոմիտաս. Ա. մեներգներ դաշնամուրի ընկերակցութեամբ: Պետհրատ 1932:
 Բ. խմբերգներ: Պետհրատ 1932:
 Հայ ժողովրդական երաժշտութիւն. Նոր Շարք. տետր Ա.—2: Պարիս 1925—1933:
 Դաշնաւորեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարազի Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ, վասն միասեռ արական խմբի. վերատեսեալ ի ձեռն Վարդան Սարգսեանի. Պարիս 1933:
 Հայ գեղջուկ երգեր (Թ. 13—22 եւ 23—32): Leipzig 1913 (տետր Ա., էջ 32, Բ., էջ 42):
 Քրդական եղանակներ. ձայնագրեց Կոմիտաս վարդապետ = Méloides Kurdes recueillies par archimandrite Comitas. Էմինեան Ազգագրական Ժողովածու: Ե. (Հայկունի, Հայ-քրդական վէպ) Յաւելուած, էջ 1—12: Մոսկուա 1904:
 1913, Մայիս 12/25ի Համերգի Հայ գեղջուկ երգերու համառօտ ամփոփումը: Կ. Պոլիս 1913, 8⁰, էջ 8: Նոյնը նաեւ գաղղիերէն:
 Ձեռաց տետր Հայ գեղջուկ համերգի որ [կազմակերպուած է] ղեկավարութեամբ Կոմիտաս վարդապետի եւ սիրայօժար մասնակցութեամբ իր 300 երկսեռ երգիչներու: Խմբագրեց՝ համառօտ ներածութեամբ Կ. Վ.: Կ. Պոլիս 1911, 8⁰, էջ 38:
 La lyre arménienne. Recueil des chansons rustiques. Transcrites et harmonisées par Komitas Wartapet. Traduction française des paroles par Archag Tchobanian. Paris (1907), 4⁰, 45 p. = Հայ Բնար, հաւաքածու գեղջուկ երգերի. գրի առաւ եւ դաշնակեց Կ. Վ.:

Հ. Պ. Է.



Յուցակ հայերէն ձեռագրաց Հայէպի Ս. Քառասուն Մանկունի Եկեղեցւոյ եւ Մասնաւորաց: Կազմեց Արտաւազ արքեպիսկոպոս Սիրմէեան, Առաջնորդ Հայոց Հայէպի: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1935, 8⁰ մեծ, էջք իբ + 415: Գինն՝ 100 ֆր. ֆր.:

Արտաւազ Սրբազան, որ երկու տարի յառաջ տուած էր Ս. Քառասուն Մանկունի Եկեղեցւոյ ձեռագրական Հաւաքածոյքի Թ. 6 ձեռագրին ընդարձակ նկարագրութիւնը առանձին հատորով (Նկարագիր Օշինի ձեռագիր ժամագիրքին. Անթիլիաս, 1933), այժմ կը գնէ մեր առջեւ նոյն Հաւաքածոյքի 157 ձեռագիրներու մանրախոյզ ցուցակագրութիւնը, արդիւնք տքնաջան աշխատութեան:

Ձեռագրական ընտիր Հաւաքածոյքի մը դոնները կը բացուին մեր առջեւ. եւ Արտաւազ Սրբազան կ'առաջնորդէ մեզ՝ ծանօթացնելու այնտեղ խնամով պահուած հինաւուրց նշխարներն նախնեաց ձեռագիրներու, որոնք դանազան են թէ ըստ հնութեան եւ թէ ըստ բովանդակութեան եւ արուեստի: Սրբազանը իւր հետաքրքիր հիւրերու հետ շրջան կ'ընէ ապա քաղաքը, ցոյց տալու առնոց նաեւ մասնաւորներու քով պահուած հայերէն ձեռագիրները: Դժբախտաբար ոմանք անհիւրընկալ են. չեն բանար դոնները տներու. կը մերժեն ցոյց տալ իրենց յարկին տակ ապաստան դտած մնացորդները նախնեաց զրաւոր երկերու: Կը մտաբերեմ դաւեչտալից տաղը Հայ բանաստեղծին, որ նոյնպէս մերժուած՝ երգած է զայրոյթէն վայախառն տուներ. առաջին տունն է.

Մէկ մարդ մի ճրագ վառեր,
 բարձր ի տեղ դրեր.
 Մէկ մի խիտ յիմար եղեր,
 ըզճրագն ի վայր է առեր.
 Տարեր սունտուկն է գրեր,
 ըզնորին լոյսն էր արգիւր.
 Վա՛յ այն մարդուն հոգւոյն,
 որ զլոյսն առեալ թագուցեր:
 ՎՐԹԱՆԷՍ ՍՐՆԿԵՅԻ:

Ներկայիս այնքան նուազ է ձեռագիրներ ուսումնասիրողները թիւը, որ իրենք ձեռագրաց տէրերն աղաչելու են հետաքրքրուողները, որպէս զի գան, տեսնեն, քննեն եւ օգտագործեն նախնեաց այդ աւանդները, որոնք բախտի բերմամբ ինկած են ահապահուած ձեռքը եւ կամ նուիրմամբ կամ դոյզն փոխարինու-

թեամբ յանձնուած են Մատենադարաններու: Պիտի յիշեմ հոս շնորհակալութեամբ եւ զոհոնակութեամբ, որ 1931/32 տարւոյն, երբ հայերէն ձեռագիրներ ուսումնասիրելու նպատակով այցելեցի Բերլին, Լայպցիգ, Մինխեն, Տիւրինգէն եւ Պարիս, ոչ միայն Մատենադարանները բացին իրենց դոնները առջեւ, այլ եւ Հնավաճառները դրին արամազրութեանս տակ իրենց վաճառելի հայերէն ձեռագիրները, օգտուելու անոնցմէ ամենայն ազատութեամբ: Յաւ է որ այս ըմբռնումը կը պակսի մերայնոց:

Ի տես Արտաւազ Սրբազանի կազմած ցուցակիս ոչ միայն կը հրճուինք, այլ եւ կը զգանք պարաք յայտնելու մեր հիացմունքն եւ շնորհակալիքը Սրբազանի անխնջ աշխատասիրութեան: Գրեթէ անձանօթ ձեռագրական Հաւաքման մը գանձերը կը ծանօթացնէ զխուսթեան, խղճամիտ եւ մանրամասն ցուցակագրութեամբ. եւ ոչ միայն Հաւաքման, այլ եւ անհատներու սեպհականութիւնն եղած ձեռագիրները կը գնէ հրապարակի վրայ:

Շատ հին է Հայէպի Ս. Քառասուն Մանկունի Եկեղեցւոյ Հաւաքածոյքը: Սկզբնաւորութիւնը ԺԴ. դարը կը շրջափէ: Կան հոն ձեռագիրներ, եւ այն ստուար թուով, որոնք ձեռագրեան օրէն իսկ հոն դտնուած են: Կը դրութեան օրէն իսկ հոն դտնուած են: Կը տեսնուի թէ Եկեղեցին դարերու ընթացքին թաւանի չէ ենթարկուած, զարմանալի բացաթաւանի է ենթարկուած, զարմանալի բացաթաւանի է ենթարկուած, զարմանալի բացաթաւանի է ենթարկուած: Պէտք է ենթադրել սակայն, թէ ուրեքուստ ըլլան Եկեղեցիէն ձեռագիրներ, հեռացուած ըլլան Եկեղեցիէն ձեռագիրներ, սոյն ժամ ծանօթ ձեռագրական Հաւաքածոններու այժմ ծանօթ ձեռագրական Հաւաքածոններ, որոնք մէջ ոչ նուազ թուով ձեռագիրներ, որոնք նախնաբար պատկանած են Հայէպի Եկեղեցւոյն:

Ներկայիս Եկեղեցւոյ մէջ կը գտնուին թուով 157 ձեռագիր: Արտաւազ Սրբազան վեր հանած է Քաղաքին մէջ՝ Մասնաւորներու քով պահուած 34 ձեռագիրներ ալ, որոնց նկարագրութիւնը կցած է ցուցակին:

Յուցակիս մէջ նկարագրուած ձեռագիրները կարելի է դասաւորել ըստ նիւթին այսպէս.
 Մասունի Աստուածաշունչի՝ Թ. 137 (1688), Սաղմոսարանի՝ Թ. 55 (1618), 56 (1618), 57 (ԺԷ), 58 (ԺԵ), 59 (1594), 60 (1649), 61 (1654), 62 (1639), 131 (1613), 132 (1604), 2 մ. (ԺԶ), 9 մ. (ԺԶ), 10 մ. (ԺԷ), 11 մ. (ԺԷ), 12 մ. (1681), 13 մ. (1703), 14 մ. (ԺԷ), 18 մ. (ԺԷ):

Աւետարան՝ Թ. 1 (1632), 2 (ԺԷ), 3 (ԺԳ⁰), 4 (1511), 5 (ԺԴ), 10 (1596), 11 (1612), 13 (1655), 14 (1612), 15 (ԺԷ), 16 (1580), 17 (1315⁰), 18 (1661), 19 (1694), 20 (ԺԷ), 21 (1259), 22 (1284), 23 (1455), 24 (ԺԶ), 25 (1731), 26 (1672), 27 (1653), 28 (1437), 29 (ԺԶ), 30 (1480⁰), 31 (ԺԷ), 32 (1250⁰), 33 (1338), 34 (1640), 35 (1557), 36 (1275), 37 (ԺԴ), 38 (1602), 39 (1300), 40 (1652), 41 (1633), 42 (ԺԵ), 43 (ԺԵ), 44 (1460⁰), 45 (1588), 46 (ԺԷ), 47 (1309), 48 (1476), 49 (ԺԴ⁰), 51 (1640), 52 (1703), 53 (1629), 54 (1358), 130 (1231), 156 (1683), Թ. 3 մ. (1230), 5 (1636), 26 (1726), 31 (1298), 32 (1327), 33 (ԺԵ): Ընդ առջեւ 56:
 Թուղթի Պաղտի՝ Թ. 142 (1307):
 Մաշտոց՝ Թ. 12 (1605), 74 (1642), 75 (1562), 76 (1690), 77 (ԺԶ), 78 (ԺԶ), 79 (1409), 80 (1638), 81 (1482), 82 (ԺԷ), 84 (1589), 85 (1582), 86 (ԺԷ), 87 (1699), 88 (1727), 89 (1653), 90 (1653), 91 (ԺԷ), 92 (ԺԶ), 93 (1641⁰), 94 (1674), 95 (1621), 96 (1669), 97 (ԺԷ), 98 (1627), 99 (1660), 100 (ԺԴ), 101 (ԺԷ), 102 (1673), 103 (ԺԷ), 104 (1566), 106 (ԺԴ), 128 (ԺԷ):
 Ժամագիրքի՝ Թ. 111 (1465), 112 (1643), 114 (1593), 115 (ԺԷ), 116 (1472), 118 (ԺԶ): Թ. 20 մ. (ԺԷ):
 Շարակնոց՝ Թ. 9 (1426), 63 (1601), 64 (ԺԷ), 65 (ԺԷ), 66 (ԺԷ), 67 (ԺԷ), 68 (ԺԶ), 69 (1512), 70 (ԺԷ): Թ. 27 մ. (1643):
 Մանրամասնի՝ Թ. 7 (1338), 8 (ԺԴ), 73 (1412), 110 (ԺԴ), 116 (1472), 117 (1591), 140 (1275):
 Գանձարան-Տաղարան՝ 50 (1662), 71 (1497), 83 (1457):
 Ճաշոց՝ Թ. 54 (1358), 133 (1639), 134 (1588), 135 (1466), 136 (1636):
 Տօնական՝ 145 (ԺԶ), 146 (1413):
 Յայտարարի՝ 154 (1536), 151 (1554), 150 (1622), 148 (1639), 152 (1650), 147 (1703), 153 (1710): Յայտարարի ըստ Յուլիանոսի՝ 149 (ԺԵ):
 Խորհրդատետր-պատարագամտոյց՝ Թ. 123 (1668), 124 (1665), 125 (1739), 157 (1694): Թ. 30 մ. (1770):
 Տօնացոյց՝ 105 (1679), 107 (ԺԷ), 108 (1681), 109 (ԺԷ), 111 (1465), 112 (1643), 113 (1480), 122 (1664): Թ. 16 մ. (ԺԷ), 17 (ԺԷ):
 Պարգատումար՝ Թ. 138 (1620), 143 (1643):
 Բաց աստի՝ Վարք Հարանց, Թ. 129 (1643): — Գր. Նարեկացւոյ՝ Պատմ. Ս. Խաչին Ապարանից Եւն. Թ. 41 (1320, սկ. պակաս): — Գիրք Աղօթից, Թ. 1 մ. (ԺԷ): Նոյնն արարեղէն թարգմանութեամբ, Թ. 34 մ.: — Ճարտար ժողովածու. Թ. 126 (1329): — Հաւաքածոն թղթոց (Խմբ. Մովսէս Երզնկացւոյ). Թ. 144 (1604): — Ժղանք Վարդանայ Եւն. Թ. 155 (1292): — Մեկն. Պատարազի, Յովհ. Արճիշեցւոյ. Թ. 127 (1687). նոյնը (Յովհ. Երզնկացւոյ խմբագրութեամբ). Թ. 15 մ. (ԺԷ): — Գրքոյր Տաթևացւոյ՝ Քարոզ գիրք, Թ. 6 մ. (ԺԷ). Մեկն. Սաղմոսաց, Զմբան հատոր. Թ. 6 մ. (ԺԷ). Մեկն. Սաղմոսաց, Եւ Երգոց երգոյց Թ. 7 մ. (1694): — Առակաց Եւն. եւ Երգոց երգոյց Թ. 7 մ. (1694): — Գարոզք Տիբատոյց եւ Միմէոն Երեւանցւոյ. Մեկն. Յովհ.

